ԵՂԵՌՆ ԵՎ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

1915–1975

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԳԵՆՈՑԻԴԻ ՀԱՆՑԱՎՈՐՆ Է

Ակադեմիկոս Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

30 տարի առաջ, ջախջախելով ֆաշիստական Գերմանիային, սովետական ժողովուրդը պաշտպանեց իր հայրենիքի անկախությունը, ազատագրություն բերեց Եվրոպայի շատ ժողովուրդների, պաշտպանեց համաշխարհային քաղաքակրթությունը դարշնագույն ժանտախտից: Սովետական մարդիկ, սոցիալիստական երկրների աշխատավորները, ամբողջ ազատասեր մարդկությունը այդ մեծ տարեթիվը նշում են որպես ընդհանուր տոն:

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը շատ խոր ներգործություն ունեցավ համաշխարհային զարգացման ամբողջ ընթացքի վրա: Նա հաստատեց, որ սոցիալիստական հասարակարգը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալական առաջադիմության գործի ամենահուսալի պատվարն է, որ հենց սոցիալիզմն է ժողովուրդներին փրկություն բերում մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություններից, այդ թվում՝ գենոցիդից՝ ամբողջ ժողովուրդների գանգվածային ընաջնջումից: Խորտակելով ֆաշիզմը, մինչև վերջ մերկացնելով նրա մարդատյաց գաղափարախոսությունն ու պրակտիկան, սովետական ժողովուրդը ջախջախեց նաև գենոցիդի ռասիստական կոնցեպցիան, որը հիտլերիզմը պետական քաղաքականության աստիճանի էր հասցրել: Վավերացրելով երկրորդ համաշխարհային պատերազմի այդ կարևորագույն արդյունքը, Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան իր առաջին ակտերից մեկով դատապարտեց գենոցիդը և ընդունեց կոնվենցիա այդ հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին:

Գենոցիդի քաղաքականությունը, ինչպես որ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ, անում է շահագործող հասարակարգի սոցիալա-

կան պայմանների հողի վրա, դառնում իմպերիալիզմի առավել ռեակցիոն ուժերի գաղափարական և ռազմական զինանոցի մի մասը։ Իմպերիալիզմը բազում ժողովուրդների դեմ ուղղված արյունալի ոճրագործությունների աղբյուրն է։ Նրա խղճի վրա ծանրացած է ամբողջ ժողովուրդների և ցեղերի բնաջնջում։

Իմպերիալիզմի ժամանակաշրջանի գենոցիդի խոշորագույն, ոչնչով չքողարկված ակտը եղավ վեց տասնամյակ առաջ Արևմտյան Հայաստանի բնակիչների ոչնչացումը։ Օգտագործելով պատերազմական իրադրությունը, թուրքական ռեակցիան 1915—1916 թվականներին արյունալի հաշվեհարդար կազմակերպեց անզեն և անպաշտպան հայ բնակչության նկատմամբ։ Ավելի քան մեկուկես միլիոն խաղաղ քաղաքացիների ֆիզիկական բնաջնջումը կատարվեց մոլեռանդ, անողոք դաժանությամբ։ Գերմանական իմպերիալիզմը, որ այն ժամանակ հսկայական ազդեցություն էր վայելում Թուրքիայում, ըստ էության խրախուսեց այդ ահավոր ոճրագործությունը և նույնպես նրա համար պատասխանատվություն է կրում։

Քառորդ դար անց հիտլերյան ֆաշիստները շատ ավելի առաջ անցան իրենց նախորդներից, հորինելով ռուսների, լեհերի, հրեաների, չեխերի և այլ ժողովուրդների բնաջնջման հրեշավոր եղանակները, Օսվենցիմում և Բուխենվալդում կառուցելով գազախցիկներ և հազարավոր ու հազարավոր մարդկանց ողջ-ողջ թաղելու փոսեր։ Բնորոշ է, որ, իր զինվորներին ճանապարհելով սլավոնների բնաջնջման, Հիտլերը նրանց կոչ էր անում ուշադրություն չդարձնել պատմության դատին, անպատկառ կերպով վկայակոչելով հայերի գենոցիդը, որն իբր վաղուց մոռացվել է։

Կապիտալիստական պետություններից ոչ մեկը որևէ ռեալ փորձ չարեց պաշտպան կանգնելու գենոցիդի պրոցեսում բնաջնջվող հայ ժողովրդին։ Այդպիսի մարդասիրական քայլը կհակասեր մասնավոր-սեփականատիրական հասարակարգի էությանը, բուրժուազիայի դասակարգային շահերին, որը, սակայն, դեմ չէր սիրաշահել հասարակական կարծիքը՝ կարեկցական խոսքեր ուղղելով «քրիստոնյա եղբայրների» հասցեին։

Առաջադեմ հասարակայնությունը, բանվորական և սոցիալիստական շարժման, գիտության, գրականության և արվեստի ականավոր գործիչները անարգանքի սյունին էին գամում ջարդարարների բարբարոսությունը։ Կ. Լիբկնեխտը, Վ. Կոլարովը, Ֆ. Նանսենը, Ռ. Ռոլանը, Ա. Ֆրանսը բազմիցս հանդես էկան մամուլի էջերում, հրապարակային ժողովներում, պառլամենտների ամբիոններից, պահանջելով դադարեցնել խայտառակ ոճրագործությունը։

Պրոլետարական մեծ գրող Մ. Գորկին ցասումով մերկացնում էր բուրժուազիայի հանդուրժողական վերաբերմունքը գենոցիդի նկատմամբ։ «Այդօրինակ փաստերը,— գրում էր նա 1929 թվականին հայ ժողովրդի ապրած ողբերգական իրադարձությունների մասին,— զարմանալի արագությամբ ու վար-

պետությամբ են մոռանում պարոնայք «հումանիստները», իդեալիստները, այն «կուլտուրայի» պաշտպանները, որը հիմնված է ազահության, նախանձի վրա, ժողովրդական զանգվածների ստրկության և նրանց լկտի բնաջնջման վրա: «Մինչև ականջները արյան ու կեղտի մեջ թաղված» այդ «կուլտուրայի» պաշտպանների խարեությունն ու կեղծավորությունը հասնում են բացահայտ խելացնորության, այնպիսի հանցագործության, որը արժանի պատիժ չունի»:

Ոչ միայն կապիտալիստական տերությունները, այլև սոցիալ-շովինիզմի ուղին բռնած II Ինտերնացիոնալի կուսակցությունները խուլ մնացին հայ ժողովրդի գոյության տարրական իրավունքը պաշտպանելու հասարակայնության նոշերի հանդեպ:

Բոլշևիկների կուսակցությունը միշտ էլ վճռական պայքար էր մղել ռասիզմի և շովինիզմի դեմ, հետևողականորեն գայրույթով դատապարտել բռնի ձուլման և գենոցիդի գաղափարախոսությունն ու բաղաքականությունը, հաստատել բոլոր ազգերի և ազգությունների հավասարությունը, նրանց ոչ միայն գոյության, այլև ինքնորոշման իրավունքը, մշտապես արդյունավետ քայլեր է ձեռնարկել միջազգային գժտությունները կանխելու համար:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը նշանավորեց Ռուսաստանի բոլոր ազգերի ու ազգությունների փրկությունը սոցիալական և ազգային հնշումից, նրանց ստեղծագործական ուժերի զարթոնքն ու ազատագրումը: Միայն սոցիալիզմը իրականում կենսագործեց իսկական մարդասիրության և արդարության սկզբունքները, բերեց ազրեսիայից ու գենոցիդից բոլոր ժողովուրդներին պաշտպանելու ոեալ երաշխիք, նրանց համար ապահովեց ազատ, խաղաղ, ստեղծարար կյանքի հնարավորություն:

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կոնկրետ արտահայտությունը եղավ 1917 թվականի դեկտեմբերին Վ. Ի. Լենինի ստորագրությամբ սովետական կառավարության ընդունած դեկրետը «Թուրքահայաստանի մասին»: Այդ դեկրետը փոքր ազգերի նկատմամբ սովետական իշխանության հոգատարության վառ դրսևորումներից մեկն է: Սակայն նրա իրականացումը վիժեցվեց Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի, առաջին հերթին, դաշնակցության՝ հայ բուրժուա-նացիոնալիստական կուսակցության մերենայությունների պատճառով, որոնք վարում էին Սովետական Ռուսաստանին հակադրվելու կուրս և դրանով իսկ ազատություն տվեցին գերմանա-թուրքական զավթիչների ձեռքերին:

Օգտվելով ստեղծված պայմաններից, թուրքական միլիտարիստները որոշեցին վերջնականապես փակել հաշիվները հայ բնակչության հետ, վերջ տալ հայ ժողովրդի ազգային գոյությանը: 1918 թվականի առաջին կեսին նրանց ցորերի հարձակումը ուղեկցվեց մարդկանց նոր զանգվածային բնաջնջմամբ, այս անգամ արդեն Արևելյան Հայաստանում:

Այդ չափազանց ծանր ժամանակաշրջանում Սովետական Ռուսաստանի կառավարությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ամեն հնարավոր բան ձեռնարկեց հայ ժողովրդին մահվան նիրաններից փրկելու համար: Պրոլետարական պետությունը ՌՍՖՍՀ-ում ապաստան գտած գրեթե կես միլիոն հայ գաղթականներին տուն և աշխատանք տվեց, նրանց համար բացվեցին դպրոցներ, հիվանդանոցներ, մանկատներ, հրատարակվեցին թերթեր և գրքեր:

Հայաստանում սովետական իշխանության հաստատումը շրջադարձային պահ եղավ նրա բազմադարյան պատմության մեջ: Սկսվեց հայ ժողովրդի իսկական սոցիալական և ազգային վերածննդի ժամանակաշրջանը: 1922 թվականի սկզբներին, Հայաստանի սովետների առաջին համագումարում, ականավոր հեղափոխական, կուսակցական և պետական գործիչ Ակ. Մյասնիկյանը հայտարարեց, որ Արարատյան հովիտը, որը հայտնի է որպես արցունքի հովիտ, մենք՝ կոմունիստներս, կդարձնենք վարդերի հովիտ, երջանկության հովիտ և որ դրան մենք կհասնենք սովետական մյուս ժողովուրդների հետ միասնական, եղբայրական դաշինքով:

Հենց ՍՍՀ Միության կազմում, առաջ մեծ ժողովրդի և մեր երկրի մյուս ժողովուրդների եղբայրական օգնությամբ, Հայաստանի աշխատավոր ժողովուրդը բուժեց իր վերքերը, հերոսական պայքար ծավալեց իր հայրենիքի սոցիալիստական վերաշինության համար: Սովետական իշխանությունը հայ ժողովրդի համար ստեղծեց բոլոր պայմանները՝ լիակատարությամբ դրսևորելու ստեղծագործական ունակություններն ու ձիրքերը: Անշեղորեն հետևելով Վ. Ի. Լենինի պատգամներին, Հայաստանի աշխատավորները, հենվելով սովետների երկրի մյուս ժողովուրդների աջակցության վրա, կոմունիստական ղեկավարությամբ, պատմական կարճ ժամանակում սոցիալիստական արտադրական հարաբերությունների բազայի վրա հանրապետությունում ստեղծեցին առաջավոր արդյունաբերություն, ժամանակակից գյուղատնտեսություն, հիանալի կուլտուրա:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, երբ վճռվում էր սովետական պետության բախտը, մեր ամբողջ բազմազգ ժողովուրդը կրծքով պաշտպան կանգնեց իր սոցիալիստական հայրենիքին, Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներին: Սովետական Հայաստանի որդիները ու դուստրերը ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների ռազմիկների ու աշխատավորների ընդհանուր շարքում հերոսաբար կռվեցին ատելի թշնամու դեմ և իրենց արժանի ավանդը մուծեցին նրա չախչախման գործում: Հատկանշական է, որ 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան մարտական փառահեղ ուղի անցավ Կովկասի նախալեռներից մինչև Բեռլին:

Նշելով ֆաշիզմի դեմ տարած մեծ հաղթանակի 30-ամյակը, սովետական մարդիկ խորապես գիտակցում են, որ այդ հաղթանակը ցուցադրեց սոցիա-

լիստական հասարակական ու պետական կարգի արմատական առավելությունները կապիտալիստականի հանդեպ, փայլուն կերպով դրսևորեց Սովետական Միության ժողովուրդների անխորտակ բարեկամության ուժն ու հզորությունը: Այդ հաղթանակը հանդիսացավ մեր հասարակության սոցիալ-քաղաքական և զաղափարական միասնության, սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի հաղթանակը, Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների հզոր միության մեջ միավորված ազատ ժողովուրդների անպարտելիության վկայությունը:

Մեր պատմական հաջողությունները հնարավոր դարձան լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրականացման շնորհիվ, ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների սոցիալիստական փոխօգնության, նրանց քաղաքական, սոցիալ-տնտեսական և զաղափարական ընդհանրության շնորհիվ:

Հայ ժողովուրդը միշտ աչքի լույսի պես է պահպանում իր անխախտ միասնությունն ու բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ, մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ: Նա ոգևշնչված աշխատում է հանուն հայրենիքի հետագա բարգավաճման, նրա անտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդման, սովետական մարդկանց բարեկեցության էլ ավելի բարձրացման: ՍՍՀՄ բոլոր եղբայրական ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ոգևորությամբ ընդունեց ՍՄԿԿ Կենտկոմի ապրիլյան պլենումի որոշումը լենինյան կուսակցության XXV համագումարի հրավիրման մասին և բոլոր ուժերը կգործադրի այն աշխատանքային նոր հաջողություններով դիմավորելու համար:

Հայկական ՍՍՀ աշխատավորները միահամուռ հավանություն են տալիս ու պաշտպանում ՍՄԿԿ-ի, նրա լենինյան Կենտրոնական կոմիտեի, Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լ. Ի. Բրեժնևի անդուլ գործունեությունը, որն ուղղված է խաղաղության և համընդհանուր անվտանգության ապահովման նպատակին: Սովետական բոլոր մարդկանց հետ միասին նրանք գայրույթով դատապարտում են իմպերիալիզմը, որը շատ ժողովուրդների շարունակվող ողբերգության ուղղակի հանցավորն է, որը խրախուսում է գազանային ռասիզմը, շովինիզմը, մարդատյացությունը:

Սովետական մարդու համար խորթ են շովինիզմն ու նացիոնալիզմը, ռասայական ասելությունը, թշնամանքը մյուս ազգերի և ազգությունների նկատմամբ: Նա զերծ է ազգային գերազանցության և բացառիկության, ազգային սահմանափակվածության և սնապարծության ստահոդ զգացումից: Ուստի օրինաչափ է, որ ամբողջ աշխարհում Սովետական Միությունը սիրով ու շնորհակալությամբ համարում են միջազգային հեղափոխական պայքարի և ժողովուրդների բարեկամության միջնարերդ:

Մարդկությունը չի մոռացել և երբեք չի մոռանա այն հանցագործությունները, որոնք սպառնում են նրա բուն գոյությանը: Կարևոր է, որ բարի կամքի

բոլոր մարդիկ միշտ հիշեն, որ քանի դեռ աշխարհում գոյություն ունի իմպերիալիզմը, մնում է նաև նոր, արյունալի շարագործությունների վտանգը: Ոչ մի մարդատյաց գործողություն չի կարող կանգնեցնել պատմության հաղթական ընթացքը: Այս մասին համոզիչ կերպով է խոսում հայ ժողովրդի օրինակը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության, ՍՄԿԿ լենինյան իմաստուն ազգային քաղաքականության շնորհիվ նա չկործանվեց, չանհետացավ, այլ արժանի տեղ գրավելով սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, նրանց հետ միասին վստահորեն առաջ է ընթանում կոմունիզմի նվիրական իդեալների իրականացման ուղիով:

(«Պրավդա», 24 ապրիլի, 1975 թ.)